ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-------» դեկտեմբերի 2011թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N6218-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 27-ի N2121-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N6218-Ա որոշմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N6218-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 2-ի N6218-Ա որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ստորև նշված հանգամանքներով՝

1. Երևանի քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 22-ի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն իրականացնող և երեխաների հետ շուրջօրյա գործունեություն կազմակերպող Երևանի նախադպրոցական հաստատությունների ցանկը հաստատելու մասին» N5848-Ա որոշմամբ հաստատվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն իրականացնող և երեխաների հետ շուրջօրյա գործունեություն կազմակերպող Երևանի համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների ցանկը, որում ընդգրկվել են որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն իրականացնող հաստատություններ՝ NN42, 78, 109, 114, 146, 160 և շուրջօրյա գործունեություն կազմակերպող հաստատություն՝ N141 նախադպրոցական ուսումնական հաստատությունները։

Հաշվի առնելով, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N29-N հրամանով սահմանված է, որ ներառական մանկապարտեզներում, որտեղ տարիքային խմբերում համալրված են նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, հիմնադրի կողմից սահմանվում է լրացուցիչ՝ հատուկ մանկավարժ(ներ)ի (սուրդոմանկավարժ, լոգոպեդ, հոգեբան) մինչև 2 միավոր հաստիք, ինչպես նաև այն, որ NN 78, 146, 160 նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակներում արդեն իսկ նախատեսված են 2-ական, NN42, 109 նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ մեկական հաստիքային միավորներ, իսկ N114 նախադպրոցական ուսումնական հաստատության հաստիքացուցակում ընդհանրապես հաստիքներ չեն նախատեսվել, ուստի Երևանի քաղաքապետի վերոհիշյալ որոշմամբ NN109 և 114 նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակներում նախատեսվել են մեկական լոգոպեդի, NN42 և 114 նախադպրոցական ուսումնական հաստատության հաստիքացուցակում մեկական հոգեբանի, իսկ N141 նախադպրոցական ուսումնական հաստատության հաստիքացուցակում՝ մեկ համակարգողի հաստիքային միավորներ։

Միաժամանակ հաշվի առնելով, որ Երևանի ենթակայության NN 5, 7, 10, 23, 32, 40, 41, 59, 63, 73, 85 և 92 նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար կառուցվել են կաթսայատներ և 2011 թվականի 4-րդ եռամսյակում դրանք հանձնվել կամ պետք է հանձնվեն շահագործման, ուստի հիշյալ նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակներում նախատեսվել են հնոցապանի սեզոնային հաստիքային միավորներ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N6218-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 2-ի N6218-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N6218-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 2-ի N6218-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ